

# ԵԿԵՂԵՑԱՊԱՏՄԱԿԱՆ

## ԳՐԻԳՈՐ ԿԵՍԱՐԱՑԻ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՒ ԻՐ ԺԱՄԱՆԱԿԸ



Է.

### ԿԵՍԱՐԱՑԻ ԵՐԿՐՈՐԿ ԱՆԳԱՄ ՊԱՏՐԻԱՐՔ (1607—1609)

Կ. Պալսոյ հայութիւնը այդ թուակա-  
նին կ'ապրէր խառնակութեան մը մէջ:  
Ճելալիներու ապստամբութեան հետեա-  
նօք բոլոր ներքին գաւառներու ընակչու-  
թիւնը՝ ապաստանած էր կենանքի ապահա-  
վութեան համար Կ. Պոլիս և անոր շուրջը:

Գարանաղցի, որ մէկն է անոնց, որ  
իր ընթիկ գաւառին ընակչութեան հետ Կ.  
Պոլիս և անոր շուրջը ապաստանող քաղ-  
մութիւններու հետ այս կողմերը ինկած և  
անոնց հետ գրագած է, շատ մանրամասն  
նկարագրած է այն տուռապանքները՝ զոր  
այս առթիւ կրած է ժողովուրդը: Միայն  
թէ ինքն թիւերու ճշգրտութեան և կանո-  
նաւոր գասաւորութեան մը խնամք տա-  
րած չըլլալով իր ժամանակագրութեան  
մէջ, կարելի չէ պայծառ եղբակցութիւն-  
ներ կանել իր գրածներէն:

Շատ որոշ կը տեսնուի սակայն՝ թէ իր  
օրերուն Կ. Պոլիս խռնուող գաղթականնե-  
րուն և ընդհանրուն միջև մեծ վէճ աւ պայ-  
քար կար, որուն ինքն ալ իրր գաւառներ-  
էն եկող զանգուածներու մարզը մասնակ-  
ցած էր:

Սիմէոն զպիր Լեհայցի, որ 1608 Սեպտ.  
10ին Կ. Պոլիս հասած է, և հետո մնացած  
իրր այցելու կրտ անցորդ այդ ներքին վե-  
ճերէն, մի քանի տողերու մէջ շատ աւելի  
յտասկ գաղափար մը կուտայ Կ. Պալսոյ  
Հայոց կացութեան մասին:

Իր Ուղեգրութեան մէջ անիկա կ'ըսէ  
թէ անոնք ունէին այդ թուականին միայն  
հինգ եկեղեցիներ, երեքը՝ Վլախիայի մէջ,  
Ս. Նիկողայոս(\*), Ս. Աստուածածին(\*\*) և

Ս. Սարգիս(\*), մէկը՝ Պալաթի մէջ(\*\*) և  
մէկը Սուլու Մանասգրի (Սամաթիա) մէջ՝  
Ս. Գէորգ:

Ըստ Սիմէոն զպիրի՝ հազիւ 80 տուն  
տեղացի հայեր կային այն ատեն Կ. Պալսոյ  
մէջ, իսկ ընկուր եւ պանդուխտ 40,000 տու-  
նէն ուելի Կ. Պոլիս, Ղալաթիա, Սկիւտար  
հաստատուած, Ճելալիներու պատճառով  
(ՀԱ. 1932, էջ 468)

Եկեղեցին, որուն շինութիւնը 1610ին իրր թէ կասա-  
րուած էր Յովհաննէս Խուլէի, ըստ Գրիգորիս կրդ.  
Գովմբիսիանի (տե՛ս Աննուագրութիւններ Ա. էջ  
38-39) Թաղէս Միհրդատեանցի 1718ին քրուած յի-  
շատակազրկէն քաղելով տուած տեղեկութեան հա-  
մաձայն, որ կը կորսնցնէ իր արժէքը Սիմէոն զպիր  
Լեհացիի ականատեսի վկայութեամբ: Բիւզանդ Քէչ-  
եան (Պատմութիւն Հիւսկանացի, էջ 48) արժա-  
զանց կ'ըլլայ աւանդութեան մը որուն համաձայն  
Մայր եկեղեցին շինուած է Սուլթան Անճէտ Ա.ի  
ատեն (1603-1617), որ մասամբ կը համաձայնէր Մի-  
հրդատեանցի տեղեկութեան, սակայն ի հարկէ մի  
քանի տարի զոնէ առաջ տանելով շինութեան թուա-  
կանը 1610էն, որպէսզի կարենար 1608ին Սիմէոն  
զպիր Լեհացի անտան վայել:

(\*) Չինիլի-Համամ կը գտնուէր, այժմ անհե-  
տացած:

(\*\*) Նշանակելի է որ Պալաթի եկեղեցւոյն ա-  
նունը չէ նշանակած Սիմէոն զպիր Լեհացիի Անշուշտ  
շատ հասկնալի է թէ այն Պալաթի Հայոց արդի Ս.  
Հրեշտակալետը չէր, քանի որ անիկա Հայոց յոսեճ-  
նուած էր՝ ըստ Գարանաղցիի՝ 1631ին, ըստ Երեմ-  
միա Չէլէպիի ժամանակագրութեան՝ 1636ին, եւ  
ըստ Սարգիս զպիր Յովհաննէսի Տեղագրութեան՝  
1628ին, իսկ Օրմանեան պատրիարքի սեփական ծե-  
ռագրի մը մէջ ես տեսած եմ սա տողերը՝ որ հա-  
ւանականօրէն ամէնէն ճշգրտայն է. «Ե թուականիս  
Հայոց 1078 (≡ 1629) փետրուարի 23 Դե.ի ի թագաւո-  
րութեան Սուլթան Մուրատի Գո. Ամ. պարգեւեաց մեզ  
Ս. Հրեշտակալետ եկեղեցին որ է ՚ի պայտառ քաղն,  
պուրաբէ կոչեցեալ յունաբէն: Արդ, Պալաթի եկեղե-  
ցին, զոր Սիմէոն զպիր կը յիշէ, 1628ին գրուուած  
Ս. Նիկողոսն է, այժմ ԳԼԷԼԻի ճափի դարձած:

(\*) Հիսար-Տիպի կը գտնուէր, այժմ անհետա-  
ցած:

(\*\*) Գոււմ-Գարսի Ս. Աստուածածին արդի Մայր

Ժողովուրդին հետ հողեւոր պաշտօն-  
եաները ևս համարմբաւած էին Կ. Պոլիս,  
ինչպէս կը հասկցուի Լեհայի այցելուի  
տեղեկութիւններէն, վասնզի այդ միջոցին  
Կ. Պոլիս կը գտնուէին 4-5 վարդապետներ,  
երեք եպիսկոպոսներ, 100էն աւելի քահա-  
նաներ, առանց հաշուելու արքաները (Նոյն):  
Ինիկները չէին ուզէր Նոյն իսկ կհե-  
ղեցիները տրամադրել գալթականներուն  
և ինչպէս որոշ կը հասկցուի Դարանազիի  
խօսքերէն, իրենց ձեռքը կը պահէին իշ-  
խանութիւնը:

Այս պատճառով կ'երևայ թէ երբ Գրի-  
գոր Կեսարացի իր ծննդավայրը մեկնեցաւ,  
Կ. Պոլսոյ մէջ իրեն յաջորդ մը չընտրուե-  
ցաւ, այլ աշխարհական տեղակալներ վա-  
րեցին գործերը:

Անիկա երբ Կ. Պոլիս կը հասնի 1607ին,  
պատրիարքական իշխանութիւնը կը զրտ-  
նուէր շրջանորոշ պատրիարքիսն վախիճե-  
րաց ձեռքը (Դարձուղի, էջ 109):

Այս գրուածիւնը յետոյ ուրիշ անգամ-  
ներ ալ կ'իրարկուեցաւ Կ. Պոլսոյ մէջ, այն-  
պէս որ շատ տարօրինակ պէտք չէ թուի:  
Այս 1605էն 1607 պաշտօն վարող աշ-  
խարհակալ վաքիճիներէն միայն երկուքին  
անունը կը յիշէ Դարձուղի. օգոյիս յար-  
եացն Նազարեթ և օթուս Եաղուպանն:

Այս Տեղակալները, որոք թիրեւս յա-  
նուն Գրիգոր վրգ. Կեսարացիի կը վարէին  
Կ. Պոլսոյ աթոռին գործերը, Ռոտտթթժ  
Հայ գաղթականներուն զրկած էին Նազազ  
մականուանեալ Ղազար քահանան, որ տե-  
ղայիներու հետ վէճ ունենալուն համար  
ակորկու մատնութիւն մը ըրած էր, և  
մազ էր մնացեր որ պատճառ գտնուի Ռո-  
տտթթի Հայոց տարագրութեան (Գր. Դա-  
րձուղի, էջ 108-113):

Գր. Դարանազի, որ իր հայրենակից-  
ներուն այցելիլու համար հոն կը գտնուէր,  
զապտթը այս ազէտէն փրկիէ՛ յետոյ, քա-  
հանաներով և երեսփոխաններով կ'երթայ  
Կ. Պոլիս Եաղ մեր այս մեծ աւազ վարդապետ  
Յակոբ ի գաւգրս ի Նաղաշի յար արարմանն  
(Նոյն, էջ 113):

Յակոբ վրգ. Զէյթունցի կը բերէ որ  
գատէ քահանան, սակայն շրջանորոշի հա-  
յերն, որ ի ճոյն ժամանակին դապաղիկ(\*) ոյ-

ժովն յարարարացի հին, յետև թոյլ դասերոյ այլ  
թիկուս եղևն նկա եւ օգնեցին նորա շարքեանն  
թհ՝ մեր հրանակելու և զնացեր (Նոյն, էջ 113):

Նախակինէ է որ Դարանազի յառկա-  
պէս կը շեշտէ թէ Եայնմ ժամանակի ոչ ոք  
կայր 'ի վարդապետաց յԵսասուկոյր. ուրեմն Կ.  
Պոլսոյ պատրիարքական աթոռն ալ թա-  
փուր էր (Նոյն, էջ 114):

Սիւմէոն դպիր Լեհայի յիշած 4-5 վար-  
դապետները և երեք եպիսկոպոսները ար-  
գիօք այդ թուականին մահնքն ալ հոտ  
թափեցան: Ասիկա շահեկան խնդր մըն է:

Դարանազի այնպէս մը ցոյց կու տայ  
թէ ուրիշ վարդապետ չըլլալուն համար  
տեղակալներուն դէմ ուրիշ գտնուած ունե-  
ցողներ իրեն օժիքէն բռնած էին ու պա-  
հանջած՝ որ դատաստան ընէ:

Գրիգոր Դարանազի կը հաւաքէ զգա-  
ւննայն կեկեղցոյ ֆահմայի և կեկեղցականներն  
որպէսզի քննութիւն ընէ և տպ յանդի-  
մանէ անոց Եյարչարիցը, սակայն դաւա-  
գատողները շին Կար՝ վախնալով տեղա-  
կալներու վրէժխնդրութիւնէն (Նոյն, էջ 115):

Յետոյ Դարանազիյն կը փնտռէ Նա-  
ղաշ Ղազար քահանան: «Հարցուկ եղէ, թէ  
ո՞ր է, ասացին թէ ի Կեսարիա որկեցին վե-  
փիցիկն՝ գնեծ Գրիգոր վարդապետ ի թերեղ (Նոյն,  
էջ 113):

Ժամանակագիրը կ'ըսէ թէ «Եւս ժա-  
մանակի յետոյ, Վինչ կայ ի Ս. Գեորգ կեկեղ-  
ցինս Սամաթիա, կու գան կ'ըսեն թէ այդ  
սպաշնորհ քահանան եկած է: Դարանազի  
դայն կը իջէ և անկէ բացատրութիւն կը  
պահանջէ իր արարքներուն համար և կ'ըսէ.  
«Կայ, մնա՛, որ Կեսարացին գայ. ի հնէ նորա  
դաստաստաւ ֆնեռքիւն առնեմ և դասապար-  
եանք զնգ շարսյար, որ շատց յարս իննիս»:  
Այս սպառնալիքին առջև Նաղաշ Ղազար  
քահանայ, վասնզի Կեսարացիէն սուժ առեր  
եզ զօրացեր էր, ամէն տեսակ նախատիք և  
հայհոյանք կ'ընէ, և Դարանազի իր համբե-  
րութիւնը կ'օրոնցնելով՝ իր աշակերտին՝ Սի-

նան պատրիարքութիւնը, որուն համար 100 հազար  
փող (այսինքն սահակ) կու տային պաշտօն առած  
առնել և 140 հազար փող ամէն տարի: Տէֆթըրտա-  
րին դուռը կը տրուէր այս տարրը. Երազ և զայլ  
մեակիրս գոր սնի սպ սմանց ի թոյլի դուռն օրով հա-  
մօրէն սուր իւր լիկի 1244 դրս. (Հ. Ղուկաս Իննից-  
եան, Աշխարհագրութիւն Երեզ Մասանց Աշ-  
խարհի, Ե. հտր. էջ 117):

(\*) Ղապալ, որչառած տուր կամ կապալ է,  
որով ծախու կ'առնուէին պաշտօնները, ինչպէս

մէտն Աբեղայի հետ փառաւոր կերպով կը ձեռնէ և զուրս կը հանէ զայն (Նշ, էջ 116):  
Նազաչ կ'երթայ Կ. Պոլիս եկող Կեսարացիին ընդ առաջ, գանդատելով որ պատն քն նախանձուկ զիս յայս հայս հասոյց ուն վարդապետ տնուն, զի Յակոբ վարդապետի կողմանցն էս (Նշ):

Այսպէս կը գրգռէ Կեսարացին որ հինքն արգէն օրս ունէր Յակոբ վրդ. Ձէյթունցիի դէմ:

Կեսարացի իրեն կը յանձնարարէ լուսնայ, վասնզի ինքն այնպիսեաց աղագաւ կու դայ սյխասանկոյր և կը խոստանայ աւոր վրէժը լուծել:

Արդարեւ քանի մը օր յետոյ կուգայ Կեսարացին սնծուս ամրոյսի ետես ի Բուզանդիս անկողացոյ և խորիս կերպի որպիս գտիւժ, որ անկեացն հայոց սոզն սարսեցին ի նմանե (Նշ, էջ 117):

Դարանազգի կ'ըսէ թէ անկ այլ զիս չկա՛մ տեսչ զինքն և յունեալ կարծիք յիսկարութեան ունեչ ընդ սեզ, այլ յցեւ են յարաստութեանք և բարոյսք են նախանձով յարկութեանք ընդ սեզ, թէ՛ նազարեթին նեզուրիսն վստե երիցեարացն և թէ մասնչի չլազար չիրիցին կողմանցն:

Դարանազգի կ'ըսէ թէ սվասն այսոցիկ պատճառաց փութացուցին ի բերեղն՝ զմեզ դասապետելոյ եւ հայածելոյ աղագաւ եւ այլոց վարդապետաց անարկութիւն լիցի եւ այլ մի՛ ոք ի թխեսցեցն գալ, զի ինն միայն բնակեսցն ի մեչ հայոց . . . սա այնպէս ունի խորհուրդ յայնմ ժամանակն մինչեւ ցայսօր ժամանակի, զի ինն միայն բնակելոյ յայսմ աշխարհն:

Ուրիմն որոշ է թէ աշխարհական վէճերն երբ դարձեալ դարձ մը կ'ընէին զէպի Կեսարացին, որ իբր պաշտպան և ախոյեան Հայ Եկեղեցոյ՝ կը բերուէր Կ. Պոլիս հալածելու համար այն օրերը, ընդհանուր խառնակութենէն սօգտուելով, կաթոլիկ կղերքն որսուցուած Հայ եկեղեցականները, որոնց եղծումները և շեղումները արգէն արձագանգ գտած էին ժողովուրդին մէջ:

Գրիգոր Դարանազգի՝ որ ինքզինքն միամիտ կը ձևացնէ և իբր թէ տեգիտակ Կեսարացիին աննորոզ բարձին, արնկեր եղբայրսեցեութիւննին և զգոռուաբար մեծամտութիւննին համար ըստածներուս, կը յայտնէ թէ ինքն կը կարծէր թէ օրի-

նագանցը անաչառ պիտի խրատէր և շեղողները ուղղութեան պիտի բերէր:

Այս պատճառով, կը խորհի իր աչակերտին՝ Սիմէոն արեղայի հետ անկախորդի սոֆո իբր հօր և մեծ եղբօր անոր տեսութեան կերպէ, նուէր տանելով պատանս յուսաշարսիցոյ, անկի գերեզմանի տուն օրինակ ի քարե շինած», անկի փայտ խաչի թագմանսանեաց սեօրհակուսն տեղաց յուսադարիցոյ, արուսոյ մոխր, արուսար թագիկից, անկի գրուի շարտ, արուս մի նուս, Իրեն կ'ընկերանային մէկ քանի քահանաներ և եկեղեցական Պետրոս Ձէյէպին:

Գրիգոր վրդ. Կեսարացի մէկ ժամ սպասցնելէ յետոյ կ'ընդօժնի զինքը և նազաչ Ղազար քահանան՝ իր մարդը՝ ձեռած ըլլալուն համար բացատրութիւն կը պահանջէ և կը թողու բազնիք կ'երթայ, առնել տալով Դարանազգիին աննաց գաւազանը, ըսելով որ արտիք, պահեղիք, եւ շատ յասասանի գրու ունիմ ի հետ զորս սիրոցն (Նշ, էջ 118):

Դարանազգիի բարեկամները կը բողոքեն պատրիարքին (էջ 119) և Նազաչին ըրածները կը բացատրեն: Կեսարացի կը խոստանայ որ իթէ՛ ուրիշներ ալ վկայեն՝ կարգազուրկ պիտի ընէ այս քահանան:

Այս միջոցին տեղակալները Դանիէլ վրդ. Այնթուպցին և մի քանի արքայաւոր սարեւս կը զրկեն որպէսզի հաշտուենն Դարանազգին և Կեսարացին, և քարոզու աղայանօր կ'առնեն կը տանին Դարանազգին Ս. Սարգիս եկեղեցին, իրենց հետ ունեւելով քարավանքով ժողովուրդն:

Գրիգոր Կեսարացին անարգանք կ'ընդունի զայն, և փոխադարձ վէճէ յետոյ՝ կը զիջի գաւազանը դարձնելու և պիտ երեսօք տես հաշտութիւն ընելու Դարանազգիին հետ (էջ 120-122), ինչպէս կը հաստատուի քիչ յետոյ անոր աշակերտին՝ Սիմէոնի մահուան (Մ 1607 Հոկտ. 25) պարագային անոր պատճառած նեղութիւններով, զորոնք մահարմատն նկարագրած է Դարանազգի (էջ 122-124), չիմ գիտեր որքան անկեղծութեամբ:

Գրիգոր վրդ. Կեսարացի յետոյ կը սկսի չարչարել սպանդոխտ և մոլորեց, անտիկ, աստուպեայ, ճնանկ եւ աղբար քահանաները, վասնզի Կ. Պոլսոյ նոր գաղթականները հետզհետէ կը բարձրանային և անոնց ծխա-

տիրութիւն կ'ընէին միասին զազթող հայ-  
բնակից քահանաները: Նորիկները հաշտ  
աչքով չէին դիտուէր բնիկներէն: Սկսեալ  
քահանաները մանաւանդ թշնամութեան  
ու ստեղծութեան օտարկայ դարձած էին  
սեղապի քահանաներուն և աշխարհակոտ  
վիճիչներուն, որոնք կը պահանջէին պան-  
դուխտ ժողովուրդէն ստացուած դրամէն  
բաժին հանել ի նպաստ եկեղեցիներուն  
վրայ զբուսած պետական տուրքին: Սա-  
կայն ազգատ ժողովուրդը հազիւ կրնար  
ապիկոյնել իր քահանաները, որոնց համար  
անհարին էր վճարել պահանջուած տուր-  
քերը: Այս պատճառով վիճիչները չէին  
թողոր անոնց մասնակցել ծիսակատարու-  
թեանց, դուրս կը վանէին եկեղեցիներէն  
ու գերեզմանատուներէն և հրուպարակա-  
յին վայթակղզութեան տեսարաններ ալ պա-  
կաս չէին ըլլար, այն աստիճան՝ որ քա-  
հանաներէն ամառք, ի թեմք կրած բռնու-  
թիւններէն ու ճնշումներէն զգուած, կը  
պարտաւորէին թողուլ իրենց կարգը եւ  
ապրուստ ճարելու համար բեռնակրութիւն  
և ջրկիրութիւն ընել:

Գրիգոր Կեսարացի Կ. Պոլիս մտնելէն  
վերջ, և հռոյստալու համար տեղակալներու  
գլխաւորին՝ Նազարէթին և սպայր վերա-  
կացուաց աշխարհախնամաց, որոնք զինքն  
վերստին կոչած էին Կ. Պոլիս, և անոնց  
զրդումներով, կը սկսի աւելի նեղել պան-  
դուխտ քահանաները: Եթէ քահանայ մը  
ընթերցման սխալ ընէր, հրապարակու ալ  
խայտոտակէր (Գրեմաղէ, էջ 124):

Քահանաները երեք աստիճան (տասն  
կարմիր, տասը զըշ, և հինգ զըշ.) տուրքի  
կ'ենթարկէ, տարուան մէջ երեք անգամ  
վճարելու պայմանով: Քահանաները վեր-  
ջին ծայր անձկութեան և տագնապի կը  
մատուռին, և ինքզինքնին ազատել կը  
խորհին: Գաղթականներէն զիրքի տէր  
մարդիկ ծածուկ կը զիմեն Ռամաստան ա-  
նունով Պալթամիլար քէհեաստին, որ կա-  
մախի Մարէք գիւղէն ազգեցիկ քարունի  
պաշտօնակար մըն էր, ու դրամի օւժով ա-  
նոր միջոցաւ Սուլթան Անմատէն հրովար-  
տակ մը կը հանեն Գարանազցիի անունով,  
որով անոր իրաւասութիւն կը տրուէր իր  
հեղինակութեան հիմարակելու էր զբուսի  
էյալթէն՝ այսինքն գրիթէ բովանդակ Հա-  
յաստանէն գաղթողները և վանոնք ինք-

նազլուխ հովուելու (Գրեմաղէ, էջ 128-129):

Գրիգոր Կեսարացի այսպէս պատճառ  
կ'ըլլայ որ Կ. Պոլիս պատերազմութիւնը  
1607ին երկուքի բաժնուի. վասնից Գա-  
րանազցին ահամայ և բռնագատուալ կը հա-  
մակերպի այս կարգադրութեան և երկու  
տարի (1607-1609) կը սկսի տխրել և հով-  
ուել զիարսախնայ ժողովուրդն ցրուալ հրա-  
մանաւ քաղաքին (Նշ, էջ 129):

Գրիգոր Կեսարացի հետզհետէ զօրա-  
նալով՝ կ'երեւայ թէ ի վերջոյ աշակերտնե-  
րուն ալ տտելի կը դառնայ: սՍասթօյցիցի  
որ վասիցներ հին զուպայայցիցն, սխամ դոժել  
և մասնել զինն՝ զլարդայանց աշխարհաց  
քի ձեր Բապիւն արածին (\*) սուս կ'ստի եւ ի ն-  
ցանէ ծնունդն պիտի կու հաւարի, եւ փարփայ  
հին հաւնէր որ շարաշար մանուալք ապանա-  
նիին:

Գրիգոր Կեսարացի կը փախի և Սա-  
մաթիոյ Ս. Գէորգ եկեղեցոյն նկուղը կ'ա-  
պաստանի. անկէ կուգայ Գարակէօմբիւկի  
Ս. Նիկողայոս եկեղեցին և հոն կը մնայ  
աւ ու զողի մէջ:

Գարանազցի վեհանձնաբար զայն կը  
հիւրասիրէ և Գրիգոր Կեսարացի զղջում  
և հրապարակու օէր կը յայտնէ Գարա-  
րանազցիին (համտ. Նշ, էջ 130-131), ա-  
կայն Վլանկացի Սաքին Մալայիմ անուն  
ազգային մը այս համաձայնութիւնը խան-  
գարելու համար Կեսարացիին կ'առաջնորդէ  
փառաւորութեամբ Գում-Գարաւ Չիմիլի  
Համամի Ս. Սարգիս եկեղեցին:

Տեղակալներու պետը՝ Նազարէթ եւ  
ընկերները նորէն կը սկսին արհամարհել  
եւ պանդուխտ քահանաները եկեղեցիէն  
արտաքսել: Այս անգամ Կեսարացիին կ'ըմ-  
բոստանայ և քրտզում անարզանաց եւ նա-  
խասնաց քանա կ'ըւս անոնց, և քահա-  
նաներ կը զրկէ Գարանազցիին մօտ, որ-  
պէսզի գայ իր մօտ, և գատուին Նազա-  
րէթի և ընկերներուն հետը:

Գարանազցի քրտզում անթիլուս՝ վնաս  
Ս. Սարգիս եկեղեցին, ապկայն տեղակալ-  
ներէն ո՛ր մէկը գատուելու չեկաւ ո՛չ Կե-  
սարացիի և ո՛չ ալ Գարանազցիի քով:

Ա. ԱԼՊՅԱՅԵԱՆ

(Շարունակելի) (5)

(\*) Քապին՝ կին արձակելու վարձըն է: